ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության կառավարությունների միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին

Հաշվի առնելով զբոսաշրջության բնագավառում հետագա փոխշահավետ համագործակցության անհրաժեշտությունն ու դրա կարևորությունը Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև, ինչպես նաև գոյություն ունեցող ընդհանուր պատմամշակութային արժեքները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Վրաստանի Հանրապետության կառավարությունը պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

1. Նպատակ ունենալով ուսումնասիրել զբոսաշրջության բնագավառում կապիտալ ներդրումների ընդարձակման հնարավորությունները՝ Կողմերը կատարում են մասնագետների պատվիրակությունների փոխանակում:

2. Մինչև Կողմերից մեկի տարածքում տեղեկատվական և սպասարկման ծառայության ստեղծվելը, երկրորդ Կողմը օգնություն է ցուցաբերում ժամանող զբոսաշրջիկների ընդունման և սպասարկման համար:

3. Կողմերը պայմանավորվեցին բարենպաստ պայմաններ ստեղծել երկու պետությունների տուրիստական ներկայացուցչությունների համար՝ զբոսաշրջության հիմնարկների բեղմանավոր աշխատանքի նպատակով:

4. Ելնելով գործող օրենքներից և կանոններից՝ Կողմերը պայմանավորվեցին բարենպաստ պայմաններ ստեղծել պետությունների տարածքով և իրենց միջոցով երրորդ երկրներ զբոսաշրջիկների ելք ու մուտքի և տեղաշարժի համար:

5. Կողմերը նպատակահարմար են գտնում տեղեկատվական, ուսուցման և գովազդային նյութերի, ինչպես նաև ձեռք բերված փորձի փոխանակումը:

6. Կողմերը համապատասխան պայմաններ կստեղծեն զբոսաշրջության երկկողմ ցուցահանդեսների կազմակերպման համար:

7. Կողմերը նպատակահարմար են գտնում կազմակերպելու զբոսաշրջության գերատեսչությունների ղեկավարների ամենամյա հանդիպումներ՝ զբոսաշրջության կապերի վիճակի որոշման և այդ ոլորտի համագործակցության զարգացման համար:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրից և գործում է 10 տարվա ընթացքում:

Կատարված է Երևան քաղաքում 1993 թվակնի մայիսի 19-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ վրացերեն և հայերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի մայիսի 19-ից: